60-ՐԴ ՆԻՍՏ

13 հունվարի 1919թ.

Նիստը բացվում է ժ. 8-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, զորական, լուսավորության և իրավարարության մինիստրները, ներկա է և Վրաստանի մեր դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը:

Հ. Սարգսյան - Զեկուցում է երկրագործության և պետական գույքերի գլխավոր վարչության փոփոխության օրինագծի մասին (գ ընթերցում):

Օրինագիծը հավելումներով ու կրճատումներով ընդունվում և հանձնվում է խմբագրական հանձնաժողովին:

Ա. Շահմազյան - Զեկուցում է. ա) զինվորների ռոճիկը 10 ռուբ. և բ) սպաների ռոճիկը ավելացնելու օրինագծերի մասին, որ ամբողջությամբ ընդունվում և հանձնվում են խմբագրական հանձնաժողովին:

Հ. Ազատյան - Զեկուցում է ֆելդշերներ և գթության քույրեր ու եղբայրներ պատրաստելու համար կուրսեր բաց անելու օրինագծի մասին:

Որոշ թերություններ շտկելու համար որոշվում է օրինագծի քննությունը հետաձգել մինչև հաջորդ նիստը:

Հ. Բուդաղյան - Զեկուցում է. ա) շրջանային դատարանին կից ցուցակագրական բաժնի վերացման, բ) պաշտոնական հայտարարությունները հրապարակելու, գ) սառը զենքերը գրավելու (գ ընթերց.) և դ) դատաստանական տուրքերի օրինագծերի մասին:

Գ-րդ ընթերցումով օրինագծերը ընդունվում և հանձնվում են խմբագրական հանձնաժողովին:

Նույնը զեկուցում է հեղափոխական տրիբունալների վճիռները վերաքննելու և գոյություն ունեցող համապատասխան դատարաններին հանձնելու օրինագծի մասին:

Վեճ է ծագում օրինագծի էության առթիվ. խոսում են թեր իրավարարության մինիստրն ու ժող. կուս. ֆրակցիայի ներկայացուցիչը, դեմ՝ մյուս բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչները:

Իրավարարության մինիստր - Տեսնելով խորհրդարանի ընդհանուր տրամադրությունը, հետ եմ վերցնում օրինագիծը:

Խորհրդարանը որոշում է հանձնարարել իրավարարության մինիստրությանը՝ ներկայացնել տրիբունալների կողմից այն դատապարտվածների ցուցակը, որոնք իրեն կդիմեն. որոշի նոցա պատժի չափը և բերի Խորհրդարան...* կմեղմացնի պատիժները կամ ներումն կշնորհի:

Հ. Սարգսյան - Զեկուցում է տոներ սահմանելու օրինագծի մասին:

Խորհրդարանը որոշում է վերադարձնել օրինագիծը՝ ճոխացնելու տոների ցուցակը քաղաքական և ազգային տոներով և հանձնարարել, որ լրիվ ցուցակը ներկայացնի հանձնաժողովը հունվարի 17-ի նիստին:

Ն. Աղբալյան - Զեկուցում է Անդրկովկասի կենտրոնական արխիվներից Հայաստանին վերաբերող դոկումենտների պատճենները հանելու համար ֆինանսների մինիստրության 50.000 ռ. ավանս տալու օրինագծի մասին:

Գ-րդ ընթերցումով ընդունվում և հանձնվում է խմբագրական հանձնաժողովին:

Նույնը զեկուցում է Գերմանիայից և Ավստրիայից եկած ու եկող հայ գերի զինվորներին նյութական օժանդակություն հասցնելու օրինագծի մասին:

Խորհրդարանը որոշեց այդ օրինագծի քննությունը թողնել հունվարի 17-ի նիստին:

Նիստը փակվեց ժ. 12-ին:

«Ազգ», 29 հունվարի 1919թ.

---

* Երկու-երեք բառ բնագրում ջնջված է:-Ծանոթ.կազմ.: